ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2026 թվականի N 823 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի N 1129-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 48.2-րդ հոդվածի 5-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 2-ի «Ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի միանգամյա թույլտվության ձևը և տրամադրման կարգը սահմանելու մասին» N 1129-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածում.

ա. 2-րդ կետը «ջրամբարների» բառից հետո լրացնել «կամ գետերի հունների արգելապատնեշների» բառերով,

բ. 3-րդ կետը «ջրամբարների» բառից հետո լրացնել «կամ գետերի հունների արգելապատնեշների» բառերով,

գ. 4-րդ կետը «ջրամբարների» բառերից հետո լրացնել «կամ գետերի հունների արգելապատնեշների» բառերով,

դ. 5-րդ կետի 4-րդ ենթակետը «ջրամբարների» բառից հետո լրացնել «կամ գետերի հունների արգելապատնեշների» բառերով,

ե. 10-րդ կետի 3-րդ ենթակետը «ջրամբարների» բառից հետո լրացնել «կամ գետերի հունների արգելապատնեշների» բառերով,

զ. 16-րդ կետը «ջրամբարների» բառից հետո լրացնել «կամ գետերի հունների արգելապատնեշների» բառերով.

2) որոշման N 2 հավելվածով սահմանված ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի միանգամյա թույլտվության ձևում.

ա. 3-րդ և 4-րդ տողերում «Ընդերքօգտագործողի» բառը փոխարինել «Թույլտվություն ստացած իրավաբանական անձի» բառերով,

բ. նախավերջին տողը «ջրամբարների» բառից հետո լրացնել «կամ գետերի հունների արգելապատնեշների» բառերով,

գ. հանել «Կ.Տ.» նշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

11.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ